ԲԱՆԱՍԵՐ

# ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

«Էջմիածին» ամսագրի նախանցյալ համարում տպագրված նյութերից մենք իմացանք, թե ինչպիսի անլուր արշավանք է սկսել հայ կաթոլիկ կղերը կարդինալ Աղաջանյանի գլխավորությամբ՝ Մայր Հայրենիքի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու դեմ։ Կաթոլիկ կղերի այդ արշավանքը նորություն չէ. վերջին դարերի պատմությանը ծանոթ ամեն մի անձնավորության հայտնի է, որ կաթոլիկ կղերը ոչ մի առիթ, իր համար քաղաքական նպաստավոր ո՛չ մի իրադրություն բաց չի թողել, մարդորսության իր ծրագիրը իրագործելու համար։ Այդ մասին կասկածանք չեն թողնում «Էջմիածնի» նախանցյալ համարում մեր հրատարակության հանձնած հանգուցյալ Իզմիրլյան արքեպիսկոպոսի և Խրիմյան Հայրիկի նամակագրությունը կաթոլիկ եղվիտների գործունեության մասին Կիլիկիայում, մի վարմունք, որը հազիվ թե հավանություն գտնի հայրենասեր շարքային հայ կաթոլիկի և ողջախոհ հոգևորականի կողմից։

Կաթոլիկ այդ մարդորսներին պատմական փաստերով մերկացնելու նպատակով, մենք անհրաժեշտ ենք համարում հրատարակության հանձնել աշխարհահռչակ ծովանկարիչ Այվազովսկու 1864 թվի մայիսի 17-ին Ղրիմի Թեոդոսիա քաղաքից ուղարկած նամակը Ս. Էջմիածին հանգուցյալ Ներսես կաթողիկոս Աշտարակեցուն՝ հայ կաթոլիկ կղերականների քայքայիչ գործունեության մասին Ռուսաստանում։ Ազնիվ հայրենասերը այնքան է վրդովված կաթոլիկ կղերականների Ռուսաստանում ունեցած քայքայիչ գործունեությունից, որ մտադրվել է բողոքել ռուսական կառավարությանը՝ արտաքսելու մարդորսությամբ զբաղվող կաթոլիկ կղերականներին Ռուսաստանից և խնդրել արգելելու նրանց գրականության մուտքը։

Այվազովսկու ներկա նամակը, բացի իր անձնական վերաբերմունքը դրսևորելուց, միաժամանակ ցույց է տալիս այն խորը ղայրույթը, որը գոյություն է ունեցել իր ժամանակին հայ մտավորական առաջավոր շրջանում հայ կաթոլիկ կղերի նկատմամբ։

## ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՎԵՀԱՓԱՌ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ[1]

Ջունեցայ կամեցողութիւն ձգել իմ ծննդական տեղիս առանց բարեբաղդութիւն ունենալու Ձեր Վեհափառութեան սուրբ օրհնութեանը դիմելու և գոհութիւնս մատուցանելու Ձեր Վեհափառութեան իմ վրայ ունեցած յիշողութեանց վրայ։

Գտնելով այս Դաւրիկեան նահանգը համեմատ Նորին Կայսերական Մեծութեան կամացը՝ ինձ կենալու բնակարան՝ նկարելու պատկերներուս համար, մնացի մինչև ցայժմ այս տեղ, զորոնք կատարելով, այժմս յառաջիկայ յունիսի սկիզբին կը ճանապարհորդիմ Ս. Բեդերպուրկ և նոյն ամսոյ քանին կուզեմ առաջի Նորին Մեծութեան պատրաստածներս առաջադրել։

Գիտնալով Ձեր Վեհափառութեանը սուրբ սրտին ջերմեռանդութիւնը՝ իւր հօտին երջանկութեանը համար, կը համարձակիմ յիշել այն մասին, որոնց համար ես ունեցայ բարեբաղդութիւն անձամբ խօսելու Ձեր Վեհափառութեանը, այն է՝ հեռացընել մխիթարեանները այս կողմերէն և նոյն մխիթար-

1. Նամակի վրա Ներսես Աշտարակեցին իր սեփական ձեռագրով գրել է. «Յովհաննէս համբաւեալ նկարիչ Այվազովսկուց»:



Այվազովսկու Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակի 1-ին էջը



Այվազովսկու Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակի 2-րդ էջը

հաններուն տպած գրքերուն Ռուսիա գալը արգելել. այս բաներուն հարկաւորութիւնը բացի յայտնի պատճառներէն, որոնք Ձեր Վեհափառութիւնը գիտէ, այս տեղի եղուիգք՝ հայր Մինաս և հայր Վրթանէս, բաւական դեղեցին մեր ժողովրդները անհարկի խօսքերով, Ձեր Վեհափառութեանը ճանապարհորդութենէն յետոյ, որոնց համբերութիւն չի բաւականանար, շատ ցաւ կու տայ մեր շատ ժողովրդեան նոցա արած անկարգ խօսքերն, որոնց պատմելով մի ըստ միոջէ՝ Ձեր Վեհափառութիւնը անհանգիստ անել չեմ կամենար։

Գիտէ և Ձեր Վեհափառութիւնը՝ որ մեր ժողովրդեան մէջ կրթեալ անձինք սակաւ են՝ այն պատճառին շատին սրտին մէջ անկարելի է որ անկարգ տպաւորութիւն չի գոյանայ։

Առանց կարծեաց յայտնի է, որ հռոմէահայոց քահանայից այս տեղերէն հեռանալները, շատ օգուտ կը կարենայ գոյացնել մեր ազգին, և նոցա տեղերը բոլեաք քահանայք (այսինքն՝ լեհ քահանաներ—Բ.) գալով, իբրու մէկ բան պակսած չի լինիր նոցա ժողովրդէն։

Խնդրեմ Ձեր Վեհափառութենէն, որ թողութիւն շնորհէք ինձ, որ թէպէտ ես ինձ բաւական թոյլ տվի այս բաներուն վրայ խօսելու՝ բայց պատճառը, նախ իմ գիտնալս է՝ որ այս բաներէն մեր ազգը կրնայ երջանկանալ, երկրորդ՝ ժամանակն ալ կը ներէ, որ այս բաներով շահվիմք և վերջապէս. կապաւինիմ Ձեր Վեհափառութեանը կամացը, որովհետև գիտեմ, որ Ձեր հօտին բարեբաղդութեանը ցանկութիւնը Ձեզ հետ է միշտ։

Անհամբերութեամբ կսպասեմ կատարմանը այս իմ խնդրանացս և կը յուսամ լսել մինիստր Լև Ալեքսեևիչ Բեռօվսքիէն՝ այս խօսքերուն համար։

Այս կողմերու շատ գիտնական անձանց խնդրանօքը ես յօժարեցայ ցոյց տալ (վիխադավքա) այս ձմեռվան իմ քաշած պատկերներս, որն որ պիտի ըլ(լ)այ, այս մայիսի քսան և մէկին, որ ժամանակին ամեն այս Դաւրիկեան նահանգի առաջաւոր անձանց կսպասեմ՝ որոնց հետ և Ազնուամեծար աղա Թորոսին Դանիէլեան ինր ընտանեօքը։

Մայրս և քեռայրս, քոյրս և ընտանիք ամենախոնարհաբար Ձեր Վեհափառութեանը Սրբոյ Աջոյն համբոյրս մատուցանեն և կը խնդրեն Ձեր Վեհափառութեան սուրբ օրհնութիւնը։ Միշտ կը ցանկամ կարօտ ըլ(լ)ալով օրհնութեան հոգևոր Տեառնդ իմոյ և կը խնդրեմ երկտողեայ գրութեամբ յիշել զիս, որում կսպասեմ Ս. Բեդերպուրկ, որն որ կարենամ ստանալ յորմէ որ կամք անէ Ձեր Վեհափառութիւնը, և մնամ յարաժամ Ձերում Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ՝

ՕՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Ի 17 մայիսի 1846 ամի,
Ի Ֆէօտոսիա

*(Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատան (Մատենադարան) Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, Թղթապանակ № 121, վավերագիր № 15)։*